

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ ԱՐԾՈՐԴՆԵՐ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունւում է ամէն լիցուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ԲԱԿԱՆՑ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՒԱՔԱԼԵԱՆԻ

Երկրորդ տարածքը սկսվելու է 101/2 ժամին, իսկ հոգեհանգիստը—12-ին:

1—2

ԲԱԿԱՆՑԱՆԻ ԹԻՒՆ

Գրաւեցէ՛ք գործին տեղեակ անձերի. ՆԵՐՔԻՆ
ՏԵՍԻՍԻՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Նա-
մակներ Բաթումից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՆ. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՔԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՆ-
ՐԴԻՐԹԻՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յրանա-ռու-
սական տօները.

ԳՐԱԿՆՑԷՎ ԳՐԻՍԻՆ ՏԵՂԵԱԿ ԱՆՁԵՐԻ

Մեր յայտնել էինք, որ վերջնականա-
պէս որոշված են և կազմակերպւում են
արևելյան գիտական ընկերութեան
բաժանմունքները Բաթում և Երևանում:
Այդ բաժանմունքները, միայն թիֆլիսի
բաժանմունքի հետ, պէտք է շարունակա-
պէս շարունակապէս Արևելքին վերաբե-
րող գիտական և արդիւնաբերական
խնդիրներով և մասնաւորապէս ստեղծե-
լով առևտրական սերտ յարաբերութիւն-
ներ Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ:

Արևելեան ընկերութեան բացված բա-
ժանմունքները մինչև այժմ շոշափելի գոր-
ծունէութիւն չեն ցոյց տուել և դեռ մի-
այն թիֆլիսի վրա են պահպանում իրանց
գոյութիւնը, մինչդեռ նրանք կարող էին
գործել և իրական պահանջների գոհա-
ցում ու բաւարարութիւն տալ: Արդարեւ,
Ռուսաստանի առևտրականների մի որոշ
թիւ, որոնց մէջ կովկասահայերը մեծա-
մասնութիւն են կազմում, մշտական ա-
ռևտրական յարաբերութիւններ ունեն
Պարսկաստանի հետ և պարսկական ա-
ռևտրականների մի նշանաւոր թիւ էլ մըշ-
տական յարաբերութիւնների մէջ է Ռու-
սաստանի վաճառականների հետ: Այդ ա-
ռևտրականները վարդա- զանգաւորում են
մի շարք անյարմարութիւնների վրա, որոնք

խոչնդոտ են հանգիստնում նրանց կանո-
նաւոր գործաւարութեան ու յարաբերու-
թիւնների զարգացման և ընդարձակու-
թեան համար: Այդ անյարմարութիւնների
հետեւն են հերթական մի հարց է երկու
երկրների առևտրական գործի համար և
ամեն մի քայլ, որ կանվի դիւրութիւննե-
րի թիւը աւելցնելու, մեծապէս կարող
է նպաստել երկու երկրների յարաբերու-
թիւնների զարգացման:

Արևելադարձական ընկերութիւնները
պէտք է կարողանան դրաւել այն մարդ-
կանց, որոնք շատ մօտ ծանօթ են երկու
երկրների առևտրական շահերին և նրանց
առևտրական յարաբերութիւնների առանձ-
նայատկութիւններին: Այդպէս, ընկերու-
թիւնները, կազմված լինելով միայն հնա-
գէտներից, աստիճանաւորներից, պատուա-
ւոր տնտեսական որոնողներից, ոչ մի գործ-
նական արդիւնք չեն առաջացրել: Ընկե-
րութիւնները կը դատաւարարվեն մեռե-
լութեան:

Պէտք է գրաւել գործին տեղեակ և
հմուտ անձանց, օգտվել իրական կեանքի
մէջ գործողների ցուցումներից և նրանց
միջոցով կենդանացնել այդ ընկերութիւն-
ները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին մի քանի տարվայ ջանքերի հնորիւ-
այժմ մեզ մօտ ժողովրդական թատրոնը գոյու-
թեան հաստատ իրաւունք է ձեռք բերել իրեն
մի որոշ և անանձին հաստատութիւն և մար-
մին Մեզ, հայերին համար այս հաստատու-
թիւնը ունի կրկնակի նշանակութիւն. նախ որ
այնտեղ մեր հասարակ ժողովուրդը ստանում

Ինչիկ:

Դանիելի ծայրում չինված էր էստրադա, ուր
տեղաւորված էր օրկեստրը: Նրան կից փոքր
դահլիճում չինված էր բեմ, որի վրա պէտք է
տրվէր կօնցերտ: Կօնցերտը սկսվեց ժամը 11-ին
բալայայկիստների խմբով: Նրա ծաղկանք-երգեցո-
ղական մասից յետոյ սկսվեց խօբէզրաֆիական
գիվերտիստներ Պարերից յետոյ իրեն ապա-
թէօզ ներկայացրվեց ֆրանս-ռուսական խումբը:

Դանիելը գլորում է շարունակ ծափահարու-
թիւններով, «vive la France, vive la Russie»
աղաղակներով ժամը 12 1/2-ին սկսվում է
անպակաս զգուշական Մօսկովցի յատկա-
պէս բերել տուած ուտելիքներով, օղիներով և
ապա ընթերցել: Կարողալիքները կամեցել էին
ցոյց տալ ֆրանսիացի հիւրերին ռուսական խո-
հանոցի ամբողջ շքեղութիւնը և առատութիւնը,
մեծաւանդ ձկնային մասի հարստութիւնը: Ահա
բաժանները լցվեցին շամպայով, օրկեստրը
նուազեց «Մարսելէզ» և Բոժե փառա-
սկան պաշտօնական ձառերը: Խօսեցին թէ
ռուս գործները և թէ ֆրանսիացիները, կար-
գացվեցին բանաստեղծութիւններ ռուսերէն և
ֆրանսերէն, բայց միայն առաջին մի քանի
պաշտօնական ձառերը լցվեցին ուշադրութեամբ
և խոր լուսութեան մէջ, մնացածները անհարկ
էր լսել, որովհետեւ շամպային և զանազան գի-
ւերների ազդեցութեան տակ առաջ եկած ոգե-
ւորութիւնը, ուրախ քրքիջները, թոյլ չէին
տալիս ոչինչ լսել: Մենք առաջ կը բերենք
միայն Մուսկովի ձառը և ֆրանսիացիներից

է թատրոնի միջոցով այն բոլորը ինչ որ պէտք
է տալ առհասարակ լուրջ բեմը հասարակու-
թեան, ցոյց տալով կեանքի չարը և բարին,
զարգացնելով և նրաւանելով ժողովրդի ճաշա-
կը, հանգիստնաւոր իրեն աղբիւր բարոյակա-
նութեան, լուսաւորութեան և զարգացման.
և երկրորդ, նա ծառայում է մեր մայր բեմի
համար իբրեւ նախապատրաստական դասարան
թէ թատրոնական հասարակութիւն և թէ բե-
մին ծառայողներ պատրաստելու տեսակէտից:

Ով հետաքրքրվել է վերջին ժամանակներս
մեր թատրոնական գործերով՝ նա անշուշտ նը-
կատած կը լինէր, որ յաճախ մեր մայր բեմի
վրա պատահում են ժողովրդական բեմի վրա
աշխատողների անունները, իսկ հանդիսակա-
ներից շատերը (մանաւանդ վերնաշարի մեծա-
գոյն մասը) կազմում են ժողովրդական թատրոն
յաճախող դասակարգից:

Ի նկատի առնելով ժողովրդական թատրոնի
այս դերը, պէտք է մեծ կարեւորութիւն տալ
այն հարցին, թէ ովքեր են նրա ղեկավարները:
Աւագեան թատրոնը ունի և հայ սեկցիա, որի
անդամները ընտրվում են:

Սովորաբար, ընտրութիւնը կատարվում է
ժողովրդական ընթերցանութիւնների կօմիտէի
ընդհանուր ժողովում, որ կայանում է իւրա-
քանիւր տարի միայն վերջինին կամ յունիսի
սկզբներին և որովհետեւ այդ ժողովի անդա-
մները զանազան ազգութիւններից են (ռուս,
վրացի, հայ և այլն) և չեն կարող իւրաքան-
չիւրը ձայն տալ իրենց իր ազգութեան նաեւ
միւս ազգութիւնների գործողների հետ, ուստի
անցեալ տարվանից սկսվեց գործադրվել մի դե-
ղեցիկ կանոն, որով իւրաքանչիւր սեկցիա նա-
խապէս հրաւիրելով բոլոր սիրողներին, կազ-
մում է նրանց ընտրութեամբ ապագայ սեկ-
ցիայի անդամների ցանկայի ցուցակը և ապա
առաջարկում ընդհանուր ժողովին հաստատելու:

Մեզ մօտ էլ անցեալ տարի գործադրվեց ընտ-
րութեան վերոյիշեալ եղանակը, բայց շատ թոյլ
չափով: սեկցիայի եօթն անդամ ընտրելու հա-
մար մօտ 55 սիրողներից ներկայ էին միայն
10—12 հոգի և այդ հնորիւ ոչ թէ սիրողնե-
րի անհոգութեամբ, այլ սեկցիայի թուլութեամբ,
որ ժամանակին չէր անցնէլ բոլորին այդ մա-
սին տեղեկացնելու և հրաւիրելու և անհո-
պէս զի չը կրկնվէ անցեալ տարվայ սխալը և
անտակտութիւնը. մենք առանձնապէս դարձ-
նում ենք ներկայ սեկցիայի անդամների ու-
շադրութիւնը այս խնդրի վրա:

Մուսկով, Գաստօն Կալմէտի և պարլամենտի
անդամ ու բանաստեղծ Կուրբաի ձառերը:

Սովորին կարգում է իր ձառը ֆրանսերէն.
«Տիկիններ և պարոններ. ուրախութեան այս
օրերում ես պատիւ ունեցց խօսել մեր ֆրան-
սիացի եղբայրներից շատերի հետ ու նա-
կեղծ կը լինեմ. ես չափազանց ուրախվի տպա-
ւորութիւն ստացայ ինձ թեւում է, որ անկեղծ
կարծիքների այս փոխանակութեան մէջ պարզ
արտայայտվեց մեր համակրութիւնների զար-
գացումը սկսած մեր առաջին քաղաքական տե-
նակցութիւնների Պարիզում, 1893 թ. հոկտեմ-
բերին ինչ որ այն ժամանակ բոլորովին անու-
րոշ գծերով էր արտայայտվում և մշուշապատ
յոյսերով, այժմ վերածվել է որոշ համոզմունք-
ների, մեր փոխադարձ շահերի ամուր կապակ-
ցութեան: Մեր ցանկութիւնները գուցէ սեղմ-
ված են որոշ սահմաններում, բայց դրա փո-
խարէն նրանց դարձել են աւելի ամուր, խե-
լացի են որոշ, մենք լիակատար վստահութիւն
ունենք երկու բարեկամ և դաշնակից ազգերի
բարոյական և նիւթական ոյժերի վրա, ազ-
գերի, որ ներկայացնում են 180 միլիոն մի
ժողովուրդ: Ես չեմ խօսում պատերազմի մա-
սին, ես խօսում եմ խաղաղութեան գործերի
մասին, բայց մեր գործը լաւ կատարելու հա-
մար, պէտք է որ մենք լինենք ուժեղ և զինա-
ւորված: Մի խօսք pro domo sua: Մենք առա-
ջադիմութիւններ ենք գործել մեր Կալմէտ Նի-
կոլայ Ուի թագաւորութեան ընթացքում, մենք
զարգացրել ենք մեր լուսաւորութիւնը և մենք

Մեր կարծիքով սեկցիան, գործի տեսակէ-
տից, պէտք է հրաւիրէ թէ վերջին տարվայ,
թէ նախորդ տարիների գործող և միեւնոյն
ժամանակ նոր ցանկութիւն յայտնող սիրողնե-
րին ընդհանուր ժողովի հէնց ժողովրդական
թատրոնի դահլիճում և նրանց ձեռքով կազմ-
վեցիայի անդամների ցանկայի ցուցակը և
ապա առաջարկել հաստատութեան, Չէ որ իս-
կապէս արդարութեան տեսակէտից եթէ նա-
խելու լինենք, գործ կատարողները մեծ չափով
սիրողներն են, առանց նրանց չէ որ սեկցիան
չէ կարող ոչինչ անել: Ուրեմն պէտք է, որ
այդ աշխատող մեծ ոյժեր ինքը ընտրէ իրան ա-
ռաջնորդներ և ոչ թէ այդպիսիները նշանակ-
վին կամ ընտրվեն գործից անտեղեակ և խորթ
մարդկանց ձեռքով, կամ իրանք ընտրողները
զանազան միջոցներով փաթաթվեն սիրողների
վրին և կարգադրութիւններ անեն:

Բացի այս՝ պէտք է ի նկատի առնել մի հան-
գամանք: Ով ծանօթ է մեր ժողովրդական
թատրոնի գործին, նա նկատած կը լինէր, որ
վերջին տարին մեր սիրողների և գործողների
մէջ ընկել է ահապէս պատակտում, որի հետե-
ւանքը այն է, որ հին սիրողների մեծագոյն
մասը հետու է մնացել գործից՝ զգուշ լինելով
ներկայ կարգերից: Ուստի, մեր կարծիքով, շատ
լաւ կը լինէր բոլոր ոյժերը միացնելու համար
ընտրել այնպիսի առաջնորդներ, որ բոլորովին
կապ չունենան նախորդ գործողների հետ ի
հարկէ գոտութեան առթիւ տուող խնդիրներում
և կարողանան միացնել պատակտով ոյժերը:
Այստեղից էլ հասկանալի է, որ ցանկայի չը
պէտք է լինեն բոլոր հանրի վերընտրութիւն-
ները:

Անյուշ

ՆԱՍԱԿՆԵՐ ԲԱԹԱՆԻՍԻՑ

1

Մայիսի 16-ին

Այս նամակով ստիպված եմ մի եղակի ող-
բերական դէպք հաղորդել:

Վերջին ժամանակներս յաճախակի մարդա-
պանութիւնները այնքան սովորական երեւոյթ-
ների շարքն էին անցել, որ աւելորդ էի համա-
րում մինչև իսկ լրագրական նիւթ դարձնել:

Բայց այսօրվայ դէպքը բոլորովին այլ էր:
Տեղիս արական գիմնազիայի երրորդ դասա-
րանում, զանի ժամանակ, աշակերտներից մէկը՝
Կլայիսաձէ աղջանուհով (վրացի, 18—19 տարե-
կան), վրդովւելով այն բանից, թէ ինչու ու-

ուժեղ ենք, և որովհետեւ մենք ուժեղ ենք,
մենք բոլորս ի սրտէ գրկում ենք ուժեղ
Փրանսիան, լուսաւորութիւն այդ դրօշակա-
կիրը, մենք զրկում ենք ջալ ֆրանսիական ազգի
զաւակներին, որոնք եկել են Պետերբուրգ
եղբայրակցելու մեզ հետ, ուսա ազգի զաւակ-
ներին հետ: Եւ յանուն այդ եղբայրակցու-
թեան, յանուն մեր ներքին տեղերի համաձայ-
նութեան և յանուն մեր հայրենասիրական
զգացումների և առաջարկում եմ յուզված
սրտի խորքից բաժակ ի պատիւ պ. Կլայի Լու-
րէի, ֆրանսիական հանրապետութեան նախա-
գահին:

Օրկեստրը նուագում է «Մարսելէզ», թըն-
դում են «vive la France» աղաղակները: Սու-
վորին պատասխանում է ֆրանսիական զին-
ւորական կցորդ զնդապետ Մուսկով:

«Տիկիններ և պարոններ. Դուք, բոլոր այս-
տեղ ներկայ ուսանի և ֆրանսիացիներ, ա-
ռաջարկում եմ ձեզ բարձրացնել ձեր բաժակ-
ները ի պատիւ. Նորին Մեծութեան Նիկոլայ
Կալմէտ, որ կենդանի մարմնացումն է և փա-
ռաւոր նշանաբանը մեր սիրեցեալ Ռուսաստա-
նի, որի երջանկութեան համար բոլոր ֆրան-
սիական սրտերը ի մի բարեկամով, ամենաբար-
տաղին ուխտ են կատարում:

Ուրանները և ռուսական օրհներգը զրդեց-
նում են դահլիճը: Ապա խօսում է «Figaro»
լրագրի խմբագրապետ Գաստօն Կալմէտ, ֆը-
րանսիական մամուլի կողմից:

«Այն ժամանակ, երբ փոքրից թնդում են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՐԱՆՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

III

Մամուլի բանկէ տը—Նախագահ Լու-
րէի այցելութիւնը:

Պետերբուրգի մամուլի տուած բանկէտ-երե-
կոյթը ի պատիւ ֆրանսիական մամուլի կայա-
ցաւ մայիսի 8-ին, երեկոյեան ժամը 10-ին
«Медведъ» հիւրանոցի ապակիաչէն մեծ դահ-
լիճում: Հիւրանոցի դրան վրա մեծ տառերով
և ելեքարական լոյսով գրված էր «Le banquet
de la presse»:

Առաջին դալիճը, զարդարված տրոպիական
զբոյ լոյսերով, ֆրանսիական և ռուսական
դրօշակներով, ողողված էր ամբողջովին ելեք-
արական երեքգունեան լոյսերով: Դանիելի հը-
կայան ապակեայ դալիճաւոր առատաւոր
միջոց պարզ երեւում էր լիալուսինը: Հրաւի-
րվածների թիւը 400 էր, որոնց մէջ 40 հոգի
ֆրանսիական մամուլի ներկայացուցիչներ. դահ-
լիճում շարված էին տասը երկու սեղաններ և
ամեն մի սեղան հիւր պէտք է ունենար չորս
ֆրանսիացի: Տիկիները չքեղ զարմանալիս
արդարաւորով էին, իսկ տղամարդիկ պաշտօ-
նական համազգեստներով կամ ֆրակով եւամեն
մի հրաւիրված կրծքին կայցած ունէր երեք-
գունեան ժապաւէն կամ երեքգունեան ծաղիկ

սուղեղների Եւգ. Արնօլդին (ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով) միշտ իրան 2 թւանշան է դնում, յարձակում է նրա վրա եւ սուր դաշակը խրում նրա կրծքի մէջ: Չը բաւականանալով դրանով, նա դանակը հանում է եւ մէկ էլ կողքից խրում: Սեղծ զոհը թէեւ իսկոյն չէ վախճանվում, բայց վերքերը մահացու են, եւ ինչպէս պատմում են, հազիւ թէ մինչեւ կէս գիշեր ապրի:

Դէպքը չափազանց տխուր էր եւ ցնցող. մի քանի վայրկեանում արդէն երկու գինեագործներն էլ (արական եւ իգական) տակն ու վրա եղան եւ ապա լուրը բերանից-բերան անցնելով, ամբողջ քաղաքում խօսակցութեան նիւթ դարձաւ: Թէեւ մեր գրածը միայն եղելութեան արտաքինն է՝ առանց մանրամասնութիւնների, բայց եւ այնպէս գլխաւոր փաստը այն տխուր երեւոյթն է, որ գինեագործայում 19 տարեկան մի տղայ, դասի ժամանակ, սպանում է իր ուսուցչուհուն՝ մի կնոջ, մի թոյլ էակեր, պատճառաբանելով այն, որ նրա նշանակած թւերով գուցէ դարձեալ ստիպված կը լինի նոյն դասարանում մնալու (արդէն երկրորդ տարին էր, որ չէր փոխվել նա):

Գ. Գրիգորեանց

II

Մայիսի 18-ին

Այսօր, մայիսի 18-ին, հողին յանձնվեց դժբախտ զոհը, Բաթումում մի չը տեսնված հանգիստութեամբ: Չը նայելով, որ յուղարկաւորութիւնը նշանակված էր երկկուսան ժամը 4-ին, բայց դեռ եւս ժամ 1-ից երկուսեւ ընտիր հասարակութիւնը սկսեց հաւաքվել զինուորական հիւանդանոցի եկեղեցու առաջ: Ուղիղ ժամը 5-ին սկսվեց յուղարկաւորութիւնը: Առջեւից դնում էին արական եւ իգական գինեագործին աշակերտները, յունաց եւ քաղաքային դպրոցների սաները իրանց ուսուցիչներով ու ուսուցչուհիներով, ապա հանգուցեալի դաջաղը վերցրած ունէին գինեագործին ուսուցիչները եւ հասակաւոր աշակերտները, որոնց հետեւում էր երկուսեւ հասարակութիւնը չը տեսնված բազմութեամբ: Նուագում էին զինուորական եւ արական գինեագործին ու քաղաքային դպրոցի աշակերտներից կազմված երաժշտական խմբերը: Մի դիմաւոր, ծանրաբեռնված 50-ից աւելի պատկերով, որոնց մէջ կային եւ թարմ ծաղիկներից հիւսուածներ: Պատկերը դրված էին. 1) արական գինեագործից. 2) իգական գինեագործից. 3) բնական դպրոցից. 4) քաղաքային դպրոցից. 5) Մարինսկի ուսուցչուհու ուսուցչից. 6) արական գինեագործին հինգերորդ դասարանի աշակերտներից. 7) նոյն գինեագործի III դասարանի անբախտ աշակերտներից. 8) նոյն գինեագործին երկրորդ դասարանի աշակերտներից. 9) հոգաբարձական խորհրդի անդամներից. 10) արական գինեագործին ու քաղաքային դպրոցի աշակերտներից կազմված երաժշտական խմբից եւ ապա բազմութիւն սիրողներից, յարգողներից, ծանօթներից ու մասնաւոր մարդկանցից՝ «վաղաժամ զոհ Արնօլդին», «անմոռանալի ուսուցչուհի Արնօլդին», «չարաբործ աշակերտի զոհ ուսուցչուհու»:

ողջոյնի հոյակապ աղաղակները ի պատիւ Թրանսիայի, խմբը այն Օգոստոսի առաջին օրերին կենացը, որը ցանկացաւ այդ մեծ դէպքերը: Նրա մտածմունքները, ինչպէս օրհնութեամբ պահպանվող ժառանգութիւն, այնքան ներշնչական էին Թրանսիայի մտածմունքների հետ, որ նոյն իսկ Նրա երազները կարծես միացած են մեր երազների հետ: Ունէր ձեռքը քաղաքային դպրոցի կենացը, որը ընդունեց մեզ երէկ նոյնպիսի համակարգով, որքան եւ հանդիսաւորութեամբ: Ունէր ողուս մամուլի կենացը, որ ընդունում է մեզ այնպիսի արտաշարժ բարեկամութեամբ: Ունէր այդ մամուլի արժանաւոր ներկայացուցչի, Սուլօրինի կենացը: Ունէր նրանց կենացը, որոնք կարող են ձեռք եւ սիրում, նրանց կենացը, որոնց սիրում էր դուք: Ունէր ձեռք մայրերի, կանանց, քոյրերի զաւակների կենացը, խմբը Թագուհի-կայսրուհու կենացը, խմբը վերջապէս Ռուսաստանի յոյսերի համար:

Պէտք է ասել, որ հանդիսականների մէջ շատերը գտնում էին Կալմէսի խօսքերը փոքր ինչ անսակտ այն կէտում, ուր նա առաջարկում է խմբի ողուս մամուլի կենացը յանձնի Սուլօրինի, կային եւ ուրիշ շատերը, որոնք նոյնպիսի իրաւունքով կարող են համարվել ողուս մամուլի ներկայացուցիչներ:

չուհուն» եւ այն յուզիչ ու արտածմիկ մակագրութիւններով:

Հանգուցեալի բնակարանի առաջ կարգ կատարվեց եւ ապա նոյն խումբն բազմութեամբ յուղարկաւորութիւնը շարժվեց դէպի գերեզմանատուն, ուր եւ հողին յանձնվեց թշուառ զոհը: հասարակութիւնը յետ դարձաւ արտաքին, տխուր եւ յուզված:

Եւգենիա Ալեքսանդրովնա Արնօլդը այնպիսի ուսուցչուհիներից է եղել, որոնք կարողանում են սէր եւ համակրութիւն կապել իր տեղիւ ազգայնականութիւնից ու հասարակութիւնից, թէ աշակերտներից, եւ ուսուցչական վարչութիւնից. դրան ապացոյց էր այն անաղին բազմութիւնը, որը եկել էր իր վերջին հրաժեշտի յարգանքն ու մնաց բարեւը տալու ամենքից սիրված ու յարգված մանկավարժուհուն:

Ռ. Պոլոտնան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐՈՒԹԵԱՆ

Շուշի, մայիսի 2-ին

«Մշակ» № 84-ում, ինչպէս եւ տեղական մի-երկու լրագրիներում, տպագրվեց, բոլորն էլ անստորագիր, Շուշուց հաղորդված լուր՝ իմ եւ ինծեան-տեղիւնքից պ. Պետրոսեանի մէջ տեղի ունեցած անախորժ եւ, խոստովանում եմ, վայրենի դէպքի առիթով:

Այդ լուրը, դիտմամբ թէ անգիտութեամբ, թղթակցի կողմից աղաւաղված համարելով, խոնարհաբար խնդրում եմ ձեզ, յարգելի խմբագիր, տեղ տաք ներկայ նամակիս ձեռ լրագրի մէջ՝ ճշմարտութիւնը վերականգնելու համար:

Երկար ժամանակ անորոշ մնացած պ. Պետրոսեան, ինչպէս յայտնի եղաւ, վաղուց պատասխան էր առիթի իմ դէմ որ եւ է սկանչալ աշուր: Տարաբաղաբար՝ առիթը ներկայացաւ:

Ապրիլ ամսի 12-ին, ուրբաթ, ժամը զրեթէ 12-ին, երբ հրապարակի վրա, ինչպէս ասում են, խնձոր գցեալ, գետնին չի հասնի, եւ դժբաղդութիւն ունեցաւ պ. Պետրոսեանին պատասխանելու: Պարոնք սկսեց իր հեղեղութեամբ ձանձրացուցիչ արտունջը ինչ որ մի ժառանգական բաժնի մասին եւ հեղեղեալ տաքանալով՝ սպառնաց իր՝ ինձ համար ոչինչ չշնորհակցելու: Շուշուց ողովով ծա աղաւաղեց ինչպէս ինքնուրուի կացնել եւ համոզել նրան, որ կայ ընդհանուր օրէնք եւ եթէ նա ունի ինձանից ո եւ է պահանջ, կարող է դիմել դատարանին: Դատարան խօսքը, ինչպէս երեւում է, դիւր չեկաւ պ. Պետրոսեանին: «Ես ինքս կանեմ իմ դատաստանը», ասաց նա, յարձակվեց ինձ վրա, բռնեց վերաբերուի օձիքից եւ քաջաց բոլոր ոյժով վերաբերուս պատուեց 3-4 վերջօկաշափ: Գերմարդկային համբերութիւն էր հարկաւոր այսօրինակ անպատեւութիւնը տանելու՝ մանաւանդ հարեւաւոր ականատեսների առաջ: Ցաւում եմ, որ այդօրինակ համբերութիւն եւ չուներեցայ նոյնիսկ րօպէին: Ակամայ բարձրացրի դաւազանս եւ մի հարուածով ցոյց տուեցի ինտելլիգենտ պարոնին, որ նրա առաջ հաւ չէ կանգնած եւ ոչ էլ մի ստրուկ: Մեզ բաժանցին: Առթիւ եւ ստորինքի գաղափարները ստիպեց ինձ հետեւել եւ ուրպի հնարաւոր է անկատելի կերպով շուտ հասնել տուն: Ես համոզված էի, որ իմ հակառակորդը էլ ինքից կը դար եւ կը վերցնէ իր ճանապարհը: Բայց, ինչպէս կը տեսնէք, չար բարդը հայածում է եղել ամբարտաւան պարոնին: Անցել էր արդէն զրեթէ 15-20 րօպէ եւ ես մեր տանից 100-ի չափ միայն քայլի վրա էի, երբ տեսայ, որ պ. Պետրոսեան վայրենի, արեւածաբաւ գազանի նման

Պատգամաւոր-բանաստեղծ Կուրաւ այսպէս խօսեց.

«Ես ֆրանսիական ազգային ներկայացուցիչներից, ինչպէս եւ ֆրանսիական գրողներից ամենակրտսեան եմ, բայց ես ինձ երբեք չեմ ների, եթէ ի բացակայութիւն աւելի արժանաւոր ներկայացուցիչների, չը հաղորդեմ ձեզ ֆրանսիական ազգի եղբայրական ողջոյնը:

«Մեզ մօտ կարող են լինել գանազան հայեացքներ պարլամենտում եւ գրողների մէջ պրինցիպիական հարցերի վերաբերմամբ, բայց երբ խօսքը ձեռ հիւանալի եւ մեծ հայրենիքի մասին է, գրողները, գեղարուեստագետները, քաղաքական գործիչները, ամենքը միաձայն արտայայտում են համակրութիւն, յարգանք եւ վստահութիւն իրեւ ապացոյց եւ առաջ եմ բերում բոլոր կուսակցութիւնների պատգամաւորական կանգիդատների profession de foi-ն վերջին ընտրողական պայքարի ժամանակ: Ամենքը միաձայն խօսում էին ֆրանս-ռուսական դաշնակցութեան անհրաժեշտութեան եւ պահպանութեան մասին:

Այս անմոռանալի տօնախմբութեան օրերում մեզ աղողվեց լսել սլաւօնական օրախօսութիւն: Մենք հասկացանք, մենք, ձեռ եղբայրները Թրանսիայում, որ մեզ հետ միացնող ոչ միայն զինուորական, դիւլաւառական, արդիւնաբերական, առեւտրական համաձայնութիւնն է, այլ նաեւ ձեռ երկրի մամուլը, գրականութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը ողուս:

հասաւ ետեւիցս եւ անասելի հայեցանքներ արտասանելով իմ հասցէին, արձակեց ատրճաւակ, անուշտ ինձ տեսնու տեղը սպանելու նպատակով: Ինձ թւաց-ատում եմ անկեղծօրէն-թէ գնդակը արդէն անցել է իմ մարմնի մէջ եւ ես, բոլորովին չլսած, փորձեցի յետ փախչել մերձակայ խանութներից մէկում ապաստան եւ փրկութիւն խնդրելու: Պ. Պետրոսեան հետամուտ լինելով ինձ՝ շարունակեց երկրորդ, երրորդ անգամ արձակել ատրճաւակը՝ որը սակայն չը հնազանդվեց նրա անգուսպ եւ չար կամքին եւ չրթաց միայն Օրհասական րօպէն գազան դարձրեց եւ ինձ Անշարժ մեկնվեցի տեղս եւ դուրս քաջեցի խնդրեալ կեանքս աղատելու նպատակով: Վրա հասան մարդիկ եւ մեզ ռեժիտցիան: Արձանակի ձայնի վրա հաւաքված տուրքը ինչպէս վարվեց իմ հակառակորդի հետ, այդ ես չը գիտեմ: Ասում են, որ շատ ծեծել են Ուրիշ կերպ՝ ինչպէս էք հրամայում հապա որ լինէր: Բայց, որ ամբարք արեւ է իր ուղեւը ինքնաբերաբար, ինտելլիկատրէն եւ ոչ, ի հարկէ, իմ հրամանով: Կամ իմ խաթրու, այդ էլ շատ պարզ է եւ բնական: Վերջ դրվեց վայրենի, անպատեւաբեր սկանդալին եւ մեզ տարան ջննիչի մօտ: Հարցու-փորձեց ականատեսների վկայութեամբ պարզվեց, որ պ. Պետրոսեան առաջին է եղել ինձ վրա յարձակվողը եւ օձիքս պատռողը, որից յետոյ նա ստացել է ինձանից ձեռափայտի մի հատ միայն հարուած: Պարզվեց եւ այն, որ 15-20 րօպէից յետոյ, արդէն մի ուրիշ տեղում, այսինքն՝ դէպի մեր տունը տանող փողոցի վրա, պ. Պետրոսեան հետամուտ լինելով ինձ՝ արձակում է ատրճաւակ ինձ կեանքից գրկելու նպատակով: Այս հանցաւորները հաստատվելուց յետո՝ պ. Պետրոսեան մի հազար րուբլու երաշխաւորութեամբ ազատ է թողնվում: Գործը այժմ ջննիչի մօտ է, որին ես առանձին, գրաւոր խնդրեմ եմ տուել արդէն գործին օրինական ընթացք տալու համար:

Յայտնում եմ իմ խորին վիշտը վերեւ յիշված սկանդալի առիթով, որի մէջ եւ թախանջվեցայ, կամքիս, առաւել եւս բնութեանս հակառակ, այն պատճառով միայն, որ Յօք երանելու գերմարդկային համբերութիւնը ինձ պակասեց եւ այդ այնպիսի մի անակնկալ րօպէում, երբ ես, առաջին անգամ իմ կեանքում, տեսայ ինձ հրապարակապէս անպատեւած:

Եթէ ո եւ մէկը կասկածում է իմ պատմածի ճշմարտութեան մէջ, թող չնորս անէ ինձ եւ բրէ: Գրաւոր հակառակը ապացուցանելու համար, անուշտ մի պայմանով, որ նա հրապարակի վրա կը գնէ իր անունը եւ ազգանունը:

Ընդունեցէք, պ. խմբագիր խորին յարգանքիս համատեքը:

Գրիգոր Մինասեւեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, մայիսի 19-ին, Թիֆլիսի «Պատմա-գիտ» ազգում տեղի ունեցաւ մի ճաշկերոյթ Ղազարոս Աղայեանի քառասնամեակի առիթով: Գաշկերոյթը կրում էր ոչ պաշտօնական, այլ մտերմական բնուորութիւն: Մասնակցողները յայտնեցին Աղայեանցին իրանց համակրութիւնները ճանքով եւ կենացից: Գաշկերոյթը ճաշի ժամանակ կարգադրվեցին եւ ստացվեց հետաքրքրեք: Չը նայելով անձրեւային եղանակին՝ ժողովվել էր երկու սեռից մեծ բազմութիւն: Ղ. Աղայեանցը ճաշի վերջում խօսեց մի ճառ, որով բացատրեց իր տեսակետը իր գործունէութեան

սակին հոգին չինել են ֆրանսիական հոգուրոյն:

Արտասանվեցին եւ ուրիշ բազմաթիւ ճառեր, կարգադրվեցին հետաքրքրներ, որոնց մէջ Մօսկովյի մամուլի ներկայացուցիչներն, որոնք հրաւիրում են ֆրանսիացի հիւրերին այցելել Մօսկովան:

Ես նստած էի մի ֆրանսիացի եւ մի ռուս գրողի մէջտեղ: Վերջինս դուրս եկաւ յայտնի գրող Պետապեկովն եւ մենք սկսեցինք խօսել գրական նիւթերի մասին: Պետապեկովն հետաքրքրվում էր իմանալ թէ արդեք թարգմանված են հայերէն իր գրութեանը: Թրանսիացի գրողը ասում էր ինձ, որ չնորհիւ Պիէր Բիլլատի հայոց երկը ժողովրդականանում է Թրանսիայում: Նա խմբի հայ մամուլի կենացը, եւ էլ խմբի ֆրանսիական առաջադէմ եւ մարդասէր մամուլի կենացը:

Ժամը 3-ն էր, երբ արդէն Պետերբուրգում կատարելապէս լոյս է եւ արեւն արդէն ծագում: Ե. հիւրանոցից դուրս գալով մենք տեսնեք, որ ամբարք ճանապարհ է դնում ֆրանսիացիներին «vive la France» աղաղակներով:

Մայիսի 9-ին

Այսօր ֆրանսիական հանրապետութեան հաւաքահանձնի Լուրէ այցելում է Պետերբուրգը: Եթէ նախորդ երկու օրերը, երբ Թրանսիայի պետը եւ միւս պաշտօնական ներկայացուցիչները գտնվում էին Ցարսկոյէ Սէլոյում, հետեւ

ընդհանուր բնուորութեան վրա եւ չնորհակալութիւն յայտնեց իրան յարգող եւ համակրող անձանց եւ հիմնարկութիւններին: Գաշկերոյթին ներկայ էին եւ օտար քաղաքացի հիւրեր:

Երեւանից եւ Սարկովից հեռագրում են մեզ, որ այդ քաղաքներում հոգեհանգիստներ են կատարված Բագրատ վարդապետ Թաւադաւեանի յիշատակին:

Մեզ հաղորդում են, որ կիրակի, մայիսի 19-ին, Սարգիս եկեղեցու երկու սեռից բաղկացած երեքեկ խումբը, այդ եկեղեցու նախկին վանահայր եւ խմբի հիմնադիր Բագրատ վարդապետ Թաւադաւեանի յիշատակին, հոգեհանգիստ կատարել տուեց: Եկեղեցում դրված դիւանդանը զարդարված էր թարմ ծաղիկներով: Պատարագին երգում էր հոգեհանգիստ նախաձեռնող խումբը: Ժնձրեւային եղանակի պատճառով շատ քչերն էին ներկայ հանգուցեալի յարգողներից: Բացի ս. Սարգիսի այժմեան վանահօրից եւ միաբաններից՝ հոգեհանգիստին ներկայ էին միայն երկու քահանաներ, որոնցից Բագրատունի քահանան մի աղուր քարոզ խօսեց պատարագի ժամանակ, իսկ պատարագից յետոյ ճառ կարդաց պ. Լաւրաբանու: Երկուսն եւ բացատրեցին հասարակութեան, որ հոգեւորականների միջից, յանձնի Բագրատ վարդապետ Թաւադաւեանին, անհետացաւ մի վերին աստիճանի ազդիւ եւ համակրելի անձնաւորութիւն, որի նմանները շատ սակաւ են պատահում այդ ասպարէզում:

Պետերբուրգի պոլետեխնիկական ինստիտուտի առաջին կուրսում, որ պէտք է բացվի այս տարվայ աշնանը, կընդունվեն ընդամենը 516 ուսանողներ: Քրանցից 240 հոգի պէտք է տեղադրվեն ֆինանսական-տնտեսական բաժանմունքում, 70 հոգի՝ նաւաշինութեան եւ 106 հոգի՝ էլէքտրօ-մեքենայագիտութեան բաժանմունքներում: Ուսանողների ամբողջ թիւը ինստիտուտի բոլոր կուրսերում պէտք է լինի ոչ աւելի 1,655-ից: Ընդունելութեան ժամանակ տեղի չեն ունենայ մրցողական ջննութիւններ, ինչպէս միւս ինստիտուտներում: Պետերբուրգի պոլետեխնիկումը կունենայ եւ մի հանրակացարան 750 հոգու համար:

ՀԵՐԶԵՐ գիւղից (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Մայիսի 4-ից այստեղ սաստիկ անձրեւ եկաւ, որ տեւեց երեք օր: Մեր ծախս, անձրեւի կարօտ արտերը կշտացան: Գիւղացիները, որ երաշտութեան պատճառով դադարել էին վարելու, այժմ նորից սկսեցին իրանց գործը եռանդով: Սակայն անձրեւը իր օգտի հետ, մի մեծ վնաս էլ հասցրեց մի դժբաղդ ընտանիքի: Մեզանից մօտիկ՝ Սուխտաշեն գիւղում, մի աղքատ ընտանիքի հայր, որի պատապանութեան տակն էին գտնվում տասը հոգի սպանվեց փլված թորանքի տակ: Անա ինչ պէս է լինում: Առաւօտեան դարձիւրեց, նա նկատում է, որ իրանց մի եղբ մտնելով թորանքում, անձրեւից պաշտպանվելու համար ընկել է թորի մէջ եւ սատկելու վրա է: Կան»

Պետերբուրգից, մայրաքաղաքը կերպարանաւ փոխվել էր, հեշտ է երեւակայել, թէ ինչ կերպարանք է ներկայացնում նա այսօր, երբ ֆրանսիացիները նրա հիւրերն են:

Քաղաքային վարչութիւնը ծախսել է 80,000 րուբլի քաղաքը զարդարելու համար: Բոլոր տները, շինութիւնները զարդարված են ծաղիկներով, ֆրանսիական եւ ռուսական դրօշակներով, ծիրաններիով, Լուրէի եւ Նիկոլայի արձաններով, մակագրութիւններով: Գիւղացի անցքերի վրա շինված են փառահեղ յաղթական կամարներ: Փողոցներում վիտում է մարդկանց խումբն բազմութիւնը եւ մարդկային կատարելա ծով են ներկայացնում: Մանաւանդ անանցանքներն է նեվսիկ պրօսպեկտը, ուր դադարել է կառերի, պագոնների երթեւեկութիւնը: Հիւրանոցների վրաստաններից շարունակ թնդում է երաժշտութիւնը, «Մարսելէզ» եւ ռուսական օրհներգը. «vive la France, vive la Russie, vive l'alliance» աղաղակներին վերջ է կայ:

Առաւօտեան ժամը 9-ին, Վարչական երկաթուղով, Էմիլ Լուրէ հասաւ Պետերբուրգը: Ընկերակցութեամբ արտաքին գործերի մինիստր Դեկլասէն եւ իր զինուորական հետեւորդները: Վօկզայի կայսերական սենեակներում արդէն գոււարվել էին բոլոր մինիստրները եւ բարձր աստիճան պաշտօնականներ՝ գիմնասիւն եւ ողջունելու նախադասին: Քաղաքացիական Լեյնա-նով, դոււմայի բոլոր ձայնաւորների հետ միա-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՄՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուգիա, Վորոնոյի արձանի հազդէլ)

Ամեցօր, բացի կիցակի օրերից

ԱՌԱՌՈՑՆԵՐԸ

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբուժութեան, վերականգնող (սիֆիլիս) և միզառեւ. հիւանդ.

Ե. Մ. Քիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային.

Կ. Բ. Գրիգորի—12—1 ժ. ականջի, քթի և կրկնային.

Զ. Բ. Բարսեղեան—11—12 ժ. կանանց և երեխայի հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—12 ժ. ներքին և երեխայի.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբեկով—5—6 ժ. վերաբուժութեան և մորթու.

Ա. Ն. Շապուղով—6—7 ժ. նեարդային (երեխայի), վերքեր և մորթու.

Գ. Պ. Բարսեղեան—7—7 1/2 ժ. ներքին և երեխայի.

Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.

Վճարը 50 կ. չբարձրեցող հիւանդները (կոստիլով) և օգնականի համար առանձին.

Օ. Տ. Առվաբանի—առանձին. ծաղկահատ և բըժըկական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկագետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ,

ՀՐԵՆՈՅԻՆ ՊԱՐՍԻՅԱՆԻ

ՊԱՐՍԻՅԱՆԻ

Հիւանդանոցի 25 տարուց ի վեր

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսիյան ծոցի առեւտրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի և անաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, զննում և վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան և Պարսկաստանից Եւրոպա, զիւրաւարակի պայմաններով.—Հասցեն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 12—100

Պարսիյան հաստատութիւնը պրոֆեսոր Հրանդ Անդրեասեան, մեքենայէտ-ճարտարագէտ, պատրաստ է փոքր փոխարինութեամբ ամեն տեսակ թելանիւթական տեղեկութիւններ հաղորդել իրեն զինուորներուն. կրնա զուէր յանձնարարութիւններ և փոխանորդութիւններ. միջնորդել զերմանական ֆապրիկաներու մօտ, և աժան, լաւ, ու նպատակայարար մեքենաներ ու երեքտական կազմածներ հայկաթեթի ծանկացողներ պէտք է դիմեն հետեւալ հասցեին.

Herrn Ingenieur H. Antréasian. Berlin N 65. Rudenardersstr. 23/30. 0—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թուղթով համար Մեծ արկղիկը 5 րուրի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաշերը բուժողներ և ամբողջական համար, ոչնչացնում է թեփուր Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՉՈՒՒ ԿԱԹԸ

Երեսին քննութիւն և օգնականութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կաշուին քննութիւն և օգնականութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ արտակարկի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ. Մաշիւմ են բոլոր պարֆումերական և զեղովածառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուլկինեան փողոց, տ. № 15, բընակարան № 2. Գրանցատի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան զեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Ներսիսեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բազում. նաեւ Միքայելեան կամուրջի վրա, Պապով և Արթուրեան զեղատաներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատուով: 80—100

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրախոսութեան վաճառում է

«Честь. романъ», Ширванзаде 50 կ.

«Хенъ», романъ, Раффи. 1 ր. 50 կ.

«Законы опеки», З. Мсерица 3 ր.

«Золотой Пётухъ», романъ Раффи, 1 ր.

«Народы Турции», переводъ съ англиск. 3 ր.

«Народы», գրքի Ս. Տիւար 1 ր. 50 կ.

«Բարոյախօսութիւն զկանանց» Բ. Ր. Մէլիք-Ազարեանց 1 ր. 50 կ.

«Պատկերներ» Վուզգի վարդապետը 60 կ.

«Փիլիսոփային աշակերտ», Օ. Սարաֆի, թարգմանութիւն 80 կ.

«Արիւնայի մարքիդուհին», հեղ. տ. Կոմսուհի հատ. ա. ր. 2 ր.

«Բանիւրազարդ» տիկին, Թ. պ. Ատրնի 80 կ.

«Վերթեր», Գէօթէլ, Թ. Մ. Մամուրեանի 80 կ.

«Անուանութիւն» բժ. Վ. Արծրեանու 75 կ.

«Սոնետներ» տիկին Բախտեանի 1 ր.

«Մամուէլ քանանայի Անեղայ» հաւաքածուք ի գրքի պատմագրոց Ա. Տէր-Միքէլեանի 1 ր. 20 կ.

«Յուշիկ կաթողիկոս Արքեպիսկոպ» Լէօյի 60 կ.

«Բնէ և կաշուի հիւանդութիւն», բժ. Ա. Բուրուզեանց 15 կ.

Армянский портъ Сибать Шахъ-Азизъ Ю. Реселовскаго. 1 ր.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенберга“, Лорисъ-Меликовская ул., № 11. 1—3

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ

(Պարսկաստան)

Հայոց դպրոցների համար հարկաւոր են երեք ուսուցիչ (թուարանութեան, հաշւապահութեան, հայոց պատմութեան) և երեք վարժուհիներ (մէկը մանկապարտէզի համար, իսկ երկուսը թուարանութեան և հայոց լեզուի համար): Պայմանների մասին զիմել մինչեւ մայիսի 25-ը Բաղրատ վարդապետ վարդապետեանցին, Թիֆլիս, Դուրցովիէ համար, № 25, իսկ այնուհետեւ «Մշակի» խմբագրութեան: 1—5

Պ Ե Ա Տ Ի Գ Օ Ր Ս Կ

ԲԺԻՇԿ Բ. ԳԱՆՋՈՒՄԵԱՆ

Ընդունում է հիւանդներին բոլոր տարիք

Առաւօտեան. 9 1/2—12

Երեկոյեան. 5 — 7

Հայոց եկեղեցու գիմնաց, տուն Դավիթովի (Կ. շ.) 6—16

ՀԵՉԵՏԻ ՀԱՅՈՑ ԵՆԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի ձայնաւոր տիրացու. ոտնիկ 18 ր. և ամսական 2 պ. այլուր կայ և արդիւնը: Դիմել՝ Ганешти, Бесарабск. губ. священнику Абрамьянцу. 2—4

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՏԻՐԱՑՈՒ

աջող ձայնով, միանգամայն հմուտ հայկական ձայնագրութեան, եկեղեցական արարողութիւնների, պաշտամանց և ծիսակատարութիւնների և կարողանայ խումբ պատրաստել Ամսական 25 րուրի ոտնիկ, մի սենեակ և արդիւնը: Դիմել՝ Въ Георгиевскъ (Терск. обл.) Священнику Персесу Варданьянцу. 2—3

Հ Ո Յ Ո Ւ Ն Ա Մ Ա

Հ Է Օ

ՅՈՎԱՅԲ ԿԱՐՈՂԻԿՈՍ

ԱՐԴՈՒԹԵԱՆ

Կենսագրական-պատմական տեսութիւն Չորս պատկերով (Յովսէփ կաթ. Արքեպիսկոպ, Կայսրուհի Նկատարինա II, իշխան Գ. Պոտեմկին, կոմս Յովհաննէս Լազարեան): Դիմել Է 60 ԿՊԵԿ Մաշիւմ է «Մշակի» Խմբագրատանը Հասցեն. Тифлисъ, редакция газ. «Мшакъ».

Ա Տ Ա Մ Ե Ա Ր Ո Ց Ժ

Կ. ԿԵՕՆՃԵԱՆ

փոխադրվել է Երեւանեան հրապարակ, տուն Գուրգենովի (Սոլովակապա փողոցի անկիւն): Ընդունում է հիւանդներին առաւօտեան 8—2, երեկոյեան 5—8 ժամին. 17—25

Կամենու և վարձել մի

Բ Օ Ն Ե Ա

հինգ տարեկան երեխայի համար Բոննան պէտք է լինի հայուհի և իմանայ լաւ. հայկերէն և ռուսերէն Դիմել՝ Բերուտայի վարչոց, № 45: տուն Բամբուկովի, Աւետիսեանի բնակարանը ժամի 1-ից մինչեւ 2-ը: 2—4

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԲԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

արանով յայտարարում է, որ նրա գիւնաւորներ մայիսի 22-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նըշանակված է աճուրդ՝ կապով տալու Միքայելեան փողոցում ջրմուղ խողովակի շինութիւնը՝ 60,00 պոգ. սաժ. 0,42X0,28 կարուածքով 1400 րուրի գումարի Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրերը վարչութեան շինութեան բաժանմունքում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը: 3—3

ՄԷԿ ԱՆՁՆԱԻՐՈՒԹԻՒՆ

կամենում է ուղեկցել արտաքին մէկ կնոջ, կամ զնալ ամարանոց շատ փոքր բնութիւնի հետ, կամ պարագի մէկ կամ երկու աղջկայ հետ Գիմել Փրանսերէն, հայերէն և մուգիկա: Դիմել՝ Контора Самадова, Дворцовая ул. 7—31

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՐԱՐԱՐՈՒՄԱՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՄԵԱՆ

Վարչութիւնը

Սրանով պատիւ ունի հրապարակելու պ. րաժնետէրերին ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որը կայանալու է Երեկոյ 1902 թիւ մայիսի 26-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, Գուրգենովի տանը, № 143, Միքայելեան փողոցում, Վեցեղ հիւրանոցին կից: Պարագմունքի տարականոն են՝ 1) վարչութեան ղեկուցումը անցնել 1901 թիւ ընկերութեան գործունէութեան մասին 2) վերաստուգող յանձնաժողովի ղեկուցումը 3) Անցնել 1901 թիւ հաշիւ ու հաշուեկշիռ քննութիւն ու վաւերացումը, ելեւմտից նախահաշիւ. նոյնպէս ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1902 թիւ համար 4) վարչութեան հրահանգի վաւերացումը (§ 28). 5) Ընկերութեան ակցիոներական դարձնելու հարցը և վերջինիս կանոնադրութեան հաստատութիւնը (§ 37). 6) վարչութեան ղեկուցումը վճարներ իր ժամանակին չը վճարած րաժնետէրերի մասին 7) վարչութեան ղեկուցումը նոր հոդեր (պետական կամ մասնաւոր) կապով վերցնելու մասին, թէ՛ նախի առիւնաբերութեան և թէ՛ արտաքին չըրտի շահագործութեան նպատակով, նոյնպէս և իր ունեցած հոդերը ամբողջովին կամ մասամբ կապով տալու կամ վաճառելու մասին 8) վարչութեան մի անդամի (§ 9), վերաստուգող յանձնաժողովի երեք անդամների և երեք փոխանցանների ընտրութիւնը (§ 21). Պ. պ. րաժնետէրերը, որոնք կը ցանկանան ծանօթանալ վերոյիշեալ ղեկուցմանց հետ, կամ ստանալ ուրիշ տեղեկութիւններ, կը բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը, իւրաքանչիւր օր, ժամը 12-ից մինչեւ 2-ը: (մ. 18, 21, 24) 2—3

Կարսի հոգեւոր կառավարութեան ատենակում

նշանակված է Ղոչալանքի „Տ Ա Յ Լ Ա Ր“ անունով 612 դեռեւորս վարելահողերը կապով տալու ամսին 29-ին, օրվայ ժամը 12-ին Աճ.ԻՐԴ և 31-ին ԿԻՆԱՃՈՒՐԴ: Մասնակցել ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել նոյն ատենին ամեն օր: Փակ իրարներ աճուրդը վերջանալուց յետոյ չեն ընդունվի: Անդամ կառավարութեան Միմաս աւագ քահանայ 5—8

Соматоза

ВОЗБУЖДАЕТ
ВЪ ВЫСШЕЙ СТЕПЕНИ
АППЕТИТЪ

Рекомендуется врачами какъ превосходное
укрепляющее средство.
затѣмъ въ органическомъ соединеніи съ
жельзомъ (20/0)
подъ названіемъ

ЖЕЛЪЗИСТАЯ
СОМАТОЗА

ПРИ БЛѢДНОЙ НЕМОЧИ.
ПРОДАЕТСЯ ВЪ АПТЕКАХЪ И АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.
НАСТОЯЩАЯ ТОЛЬКО ВЪ ОРИГИНАЛЬНОЙ УПАКОВКѢ.

„ՈՐՈՏԱՆ“

Ն Ա Ի Թ Ա Ր Դ Ի Դ Ն Ա Բ Ե Ր Ա Վ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Դ Ն Ը հրապարակում է իր րաժնետէրերին Ընկերութեան գրասենեակը՝ այս տարվայ ապրիլի 1-ից, փոխելու իրանց մօտ եղած ժամանակաւոր րաժնետիրական անդորրագրերը բոլորովին վճարված րաժնետիրական անդորրագրերով: Անդորրագրերի ընդունելութիւնը և տալը կատարվում են ամեն օր, ժամի 10-ից մինչեւ 4-ը: 1-ը